ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«----» _____2010թ N._____

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը՝ քաղաքացի Գևորգ Մադաթյանի ընտանիքին Երևան համայնքի սեփականություն համարվող Չեխովի փողոցի հ.20 շենքի հ.1 հասցեում գտնվող բնակելի տունը անհատույց օտարելու մասին և ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի <<Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2010 թվականի ծրագրի վերաբերյալ>> հ.55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով և 28-րդ կետի 4-րդ ենթակետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևանի Շենգավիթ վարչական շրջանի Չեխովի փողոցի հ.20 շենքի հ.1 բնակելի տունը (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 09.09.2010թ. հ.2733315 վկայական) սեփականության իրավունքով անհատույց փոխանցել /նվիրաբերել/ քաղաքացի Գևորգ Մադաթյանի /անձնագիր՝ AG0297978 տրված 29.05.2004թ. 003 կողմից/ 9 անձից բաղկացած ընտանիքին /ինքը, կինը՝ Սաթենիկ Բանդուկանյանը, երկու աղջիկները՝ Անահիտ և Դիանա Մադաթյանները, հայրը՝ Էդուարդ Մադաթյանը, մայրը՝ Անահիտ Սահակյանը, քույրը՝ Լիլիթ Մադաթյանը, պապը՝ Արմենակ Մադաթյանը, տատը՝ Հայաստան Գևորգյանը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Ի
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք- Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

<<Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն անհատույց օտարելու մասին>>
Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

Սույն որոշման նախագծով բնակարան է հատկացվում քաղաքացի Գևորգ Մադաթյանի ընտանիքին, որը 2003 թվականից մինչ օրս բնակվում է Չեխովի փողոցի հ.20 շենքի հ.1 շինությունում, որի գործառական նշանակությունը Երևանի քաղաքապետի համապատասխան որոշմամբ դարձել է բնակելի:

Գևորգ Մադաթյանի 9 անձից բաղկացած ընտանիքը /ինքը, կինը՝ Սաթենիկ Բանդուկանյանը, երկու աղջիկները՝ Անահիտ և Դիանա Մադաթյանները, հայրը՝ Էդուարդ Մադաթյանը, մայրը՝ Անահիտ Սահակյանը, քույրը՝ Լիլիթ Մադաթյանը, պապը՝ Արմենակ Մադաթյանը, տատը՝ Հայաստան Գևորգյանը՝ հաշվառված են Արտաշեսյան փողոցի հ.50/1 շենքի հ.24 բնակարանում: Նույն բնակարանում հաշվառված բնակվում են նաև հորաքույրը՝ Կարինե Մադաթյանը, հորաքրոջ ամուսինը՝ Մարտիրոս Այվազյանը, հորաքրոջ երկու տղաները՝ Կարեն և Գեորգի Այվազյանները, հորաքրոջ երկու թոռները՝ Արթուր և Կարինե Այվազյանները:

Գևորգ Մադաթյանի բազմանդամ ընտանիքի բնակությունը վերը նշված հասցեում բարենպաստ պայմաններ չի ապահովում և ստեղծում է սոցիալական լարված մթնոլորտ ընտանիքի անդամների համար:

Քաղաքացի Գևորգ Մադաթյանի կողմից բազմաթիվ դիմումներ են հասցեագրվել վերադաս կառավարման տարբեր մարմինների՝ բնակարան հատկացնելու խնդրանքով:

Գևորգ Մադաթյանի ընտանիքը բնակարանային պայմանների բարելավման կարիքավոր է:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Ի
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Ի
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ